# ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ԹԵՄԸ ԵՒ ԷԹՆՈԴԱՒԱՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԸ ՆԱԽԻՋԵՒԱՆՈՒՄ XVII-XVIII ԴԱՐԵՐՈՒՄ

*XIV դարի 30-ական թուականներից Արեւելեան Հայաստանի Նախիջեւան գաւառի հայ բնակչութեան մի զգալի հատուած յարեց Հռոմի կաթողիկէ եկեղեցուն: Պատմագրութեան մէջ «ունիթորներ» անունով յայտնի այս փոքրաթիւ համայնքը իր գոյութիւնը պահպանեց մի քանի դար:*

*Գտնուելով Արեւելքի ու Արեւմուտքի առեւտրական տրանզիտ ճանապարհների ճիշտ խաչմերուկում այս համայնքը խոշոր հետք թողեց Արեւելք-Արեւմուտք տնտեսական, մշակութային ու քաղաքական կապերի ստեղծման ու զարգացման գործում: Կաթողիկէ համայնքի նշանաւոր մտաւորականների գրական ու յատկապէս թարգմանչական գործունէութեան շնորհիւ թարգմանուեցին եւ հայ իրականութեան մէջ շրջանառութեան դրուեցին աստուածաբանական, փիլիսոփայական ու լեզուագիտական բնոյթի եւրոպական լաւագոյն աշխատանքները*[1]:

*Միանգամայն տեղին է հայագիտութեան մէջ ունիթորների մասին այն գնահատականը, թէ «մշակութային զարգացման տեսակէտից ունիթորական միաբանութիւնները մեզանում 13-14-րդ դարերում մօտաւորապէս նոյն դերը կատարեցին, ինչ որ հետագայում Մխիթարեան միաբանութիւնը»*[2]:

*Միաժամանակ, աշխարհագրօրէն գտնուելով հայ ուղղափառ եկեղեցու ճիշտ սրտում, Նախիջեւանի հայ կաթողիկէ համայնքը դարերով իր վրայ տարաւ վերջինիս մղած անհաշտ պայքարը միարա-*

---

1 *Ունիթորական գրականութեան մասին տե՛ս* **M. A. Oudenrijn.** *Linguae Haicanae scriptores*, Bernae, 1960; **С. С. Аревшатян.** *К истории философских школ средневековой Армении (XIV в.),* Ереван, 1980, стр. 14-29; **G. Ter-Vardanian.** *La litérature des milieux uniteurs (XIIe-XVe siècles),* - Arménie entre Orient et Occident. Trois mille ans de civilisation. Sous la direction de R. H. Kévorkian, Paris: Bibliothèque nationale de France, 1996, pp. 62-64, 217 եւ այլն:

2 **Հ. Գաբրիէլեան.** *Հայ փիլիսոփայական մտքի պատմութիւն, հ. II, Երեւան, 1958, էջ 120:*